

Ա. ՔՈԼԱՆԶՅԱՆ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՆՈՐԱՀԱՅՏ ԵՐԿԱԹԱԳԻՐ ՊԱՏԱՌԻԿՆ
ՈՒ ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆՇԱՆԱԳՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՐՑԸ

Վերջերս ավարտվեց Պետ. Մատենադարանում պահպանվող 1836 հայերն ձեռագիր պատառիկների գիտական մշակման գործը, որի վրա՝ մենք աշխատում էինք ավելի քան երեք տարի շարունակ:

Մատենադարանի հայերն ձեռագիր պատառիկների հավաքածուն գոյացել է երկար տարիների ընթացքում: Պատառիկները հավաքվել են ձեռագրերի մնացորդներից, ժամանակին ձեռագրերի պահպանակների վերածված և ապա անշատված հատվածներից, ձեռագրերից պատահանորեն ընկած թերթերից, անբարեխիղ մարդկանց կողմից ձեռագրերից պոկված մասերից, ձեռագրերի էջանշաններից (այսինքն ընթերցման թերթը ցույց տալու համար օգտագործված կտորներից) և այլն, և այլն:

Մատենադարանի պատառիկների մի զգալի մասը անցյալում հավաքվել է էջմիածնի մատենադարանում, մի ուրիշ մասը՝ բերվել է Վանի շրջանից, Լիմանապատից, Աղթամարից, Կառուց կղզուց, Տաթևի վանքից, Անիի՝ ակադ. Ն. Մանի հիմնած թանգարանից, Թիֆլիսի Ազգագրական ընկերությունից, Ներսիսյան զոլորդից, «Էլումա» հանդեսի խմբագրությունից, Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեից, Թավրիզից և այլն, և այլն: 1928 թվականին մի շարք արժեքավոր պատառիկներ է բերել Մոսկվայի Էտղարյան ճեմարանից, Մովսետական Հայաստանի երրեմնի կուսադողկոմ Ասքանաղ Մոավլյանը: Պատառիկների հավաքման դորում շնորհակալ աշխատանք են կատարել նաև նաշիկ վ. Դաղյանը, Մեսրոպ Տեր-Մովսիսյանը, Գարեգին Հովսեփյանը, Երվանդ Շահպիզը, Կարո Ղաֆադարյանը և ուրիշներ:

Մեր պատառիկների շաբառում գտնվում են ձեռագրերի բեկորներ, որոնք հանվել են Հաղպատի մոտ գանվող մի քարանձավից, Սաղմոսավանքի այրից և այլն: Նրանց մեջ կան բոլորություն սևացած, փոտած, կողքերից ալրված և կամ չնշված հատվածներ, որոնց ընթերցումը և բովանդակության ճշտումը շատ դժվարություններ է ներկայացնում:

Դարերի խորքից արյան և մոխրի միջով մինչև մեր օրերը հասած յուրաքանչյուր ձեռագիր պատառիկ, լինելով հավերժորեն կորսոյան մատնված մի հնագարյան ձեռագրի վերջին բեկորը, անգնահատելի արժեք է ներկայացնում ընդհանուր հայագիտության համար:

Մենք մեր աշխատանքների ընթացքում նախ վերստուղեցինք և պարզեցինք ճշտված համարվող պատառիկների ինքնությունը և կատարեցինք անհրաժեշտ եղող նոր լրացումներ: Բայց մեր հիմնական ուշադրությունը դարձ-

րինք բոլորովին անհայտ ու շվերծանված ձեռագիր պատառիկների վրա, և մեզ հաջողվեց պարզել նրանց դգալի մասի բովանդակությունը:

Այսպիսով, մեզ հայտնի գարձան բացի հնագրական մեծ արժեք ունեցող հատվածներից նաև հայ նշանավոր մատենագիրներ՝ Աղաթանգեղոսի, Խորենացու, Փարավեցու, Եղիշեի, Սերեսոսի և ուրիշների աշխատություններից հնագույն բեկորներ ու թարգմանական գործերի պատառիկներ:

Մատենագրաբանի պատառիկները նկարագրելու ժամանակ պարզվեց, որ անցյալում մի ձեռագրի մաս կազմող զանազան թերթեր զետեղված են եղել բոլորովին իրարից տարրեր համարների տակ: Մենք ենք լուսավոր ինչպես նրանց հնագրական տվյալներից, այնպես էլ բովանդակությունից, ի մի բերելով նրանց, զետեղեցինք մի համարի տակ: Բազմաթիվ օրինակներից հիշենք միայն մեկը.— մի ժամանակակից բեկորներ, որոնք զետեղված էին իրարից անհամեմատ հեռու Յ տարրեր համարների տակ (№ № 1321, 1437 և 1508), նկատի առնելով նրանց նույն դրշության պատկանելը և անցյալում մի մայր ձեռագրի մասեր լինելը, միացրինք 1321 համարի տակ:

Պատառիկների պատմության համար հետաքրքրական է այն փաստը, որ անցյալում նույն ձեռագրից մաս կազմած զանազան բեկորներ մենք այժմ գրանում ենք թե՛ պատառիկների հավաքածուում և թե՛ ձեռագրերի կողերին կարգված պահպանակների շարքում: Այս առթիվ անհրաժեշտ ենք գտնում հիշատակել Գարեգին Ա կաթողիկոսի կողմից 1946 թ. հրատարակված Կյուրեղ Երուսաղեմացու «Կոշումն ընծայութեան» աշխատությունը բովանդակող պահպանակները, որոնք անվիճելիորեն 9-րդ դարի վերջերի դրշության են պատկանում և 1953 թ. թեյրութից իր հետ բերելով Մատենագրաբանին հանձնեց Հայրենադարձ Կարապետ Բիտենյանը, ըստ որի հայտարարության այդ ավետարանը իր հնագարյան պահպանակներով երկար ժամանակ պահպանվել է Կեսարիայի Պետուասա գյուղում, Բիտենյանների ընտանիքում: Օրերես մեզ հայտնի դարձան նույն ձեռագրի երրեմնի մաս կազմած Յ անուն պատառիկներ են, որոնցից մեկը բերվել էր Անիից, ակադ. Մատի հիմնած թանգարանից, իսկ մյուս երկուար՝ երկար ժամանակ պահվել էին էջմիածնի մատենագրաբանում: Իհարկե, նման օրինակները հաճախակի կարող են դառնալ, հատկապես այն ժամանակ, երբ ուսումնասիրվեն նաև Մատենագրաբանի ձեռագրերի կողերին կարված շուրջ 2000 պահպանակները:

Հնարավոր եղավ նաև գտնել որոշ պատառիկների մայր ձեռագրերը և պատառիկները զետեղելով կրկին նրանց մեջ լրացնել ցարդ «թերի» համարված մի քանի ձեռագրեր:

Մեր կողմից վերծանված պատառիկների մեծ մասը համեմատել ենք կամ ոխտական հրատարակությունների և կամ ամենաընտիր տպագրված գրքերի հետ, իսկ նրանց անտիպ լինելու դեպքում բաղկատել ենք Մատենագրաբանում պահպանված լավագույն ձեռագիր օրինակների հետ, նշել ենք պատառիկների բովանդակությունը, տվյալ տպագիր հրատարակության և կամ ձեռագիր օրինակի համապատասխանող էջերը, երբեմն համառոտակի ցույց ենք տվել ուղղագրական կամ բնագրագիտական տարրերությունները:

Մատենագրաբանի հավաքածուի 1836 հատակուտորներից 667-ը գրված է մադարի վրա, իսկ մնացյալ 1169 հատը՝ թղթի վրա:

Հստ բովանդակության, պատառիկները կարելի է բաժանել հետեւալ կերպ:

Աստվածաշնչի մասեր (Հին կտակարան, Նոր կտակարան, Ավետարան), Ճաշոց դրբերի հատվածներ, պատառիկներ՝ Հայսմավորքից, Մաշտոցներից, Շարականներից, Գանձարաններից, Սաղմոսներից, Ճառընտիրներից, Ժամապրերից, ինչպես նաև քարոզ-խրատ-մելոնության հատվածներ, Խորհրդատեար-պատարագամատուցներ, Տոնացուց-տոնապատճառներ, Աղոթամատուցներ, լուծմունք, Մանրումմունք, Ռսկեփորիկ, Վարքազրություն-վկայարանություն և հարանց վարք, բժշկարան-դեղագրեր, քերականներ, աշխարհագրական և այլ պատառիկներ:

Հայ անվանի մատենագիրների աշխատություններից պետք է հիշատակել հետեւյալ պատառիկները, որոնցից զգալի մասը անցյալում վերծանված չի եղել. Աղաթանգեղոսից՝ 6 անուն պատառիկներ՝ բոլորն էլ զրված մագաղաթի վրա, երկաթագրով, Եղիշեից՝ 7 անուն պատառիկներ, Մովսես Խորենացու Պատմությունից՝ 5, Ղազար Փարպեցու Պատմությունից՝ 1, Հովհանն Մամիկոնյանից՝ 1, Սերեոսից՝ 1, Մեսրոպ Վայոցձորեցուց՝ 1, Կիրակոս Գանձակեցուց՝ 2, Մովսես Կաղանկատվացուց՝ 1, Հացունյաց խաչի պատմությունից՝ 2 և այլն:

Հայ հեղինակների աշխատություններից պետք է հիշատակել նաև «Յաճախապատում» աշխատության հնագույն նորահայտ պատառիկները, որոնք պատկանում են 9-րդ դարի գրչության, Ստեփաննոս Սևանցու կազմած Մաշտոց կաթողիկոսի վարքը, Գրիգոր Նարեկացու Ողբերգության մատյանից 8 պատառիկներ, ինչպես նաև տաղերից մի պատառիկ, Գրիգոր Մագիստրոսից մի հատված՝ «Պատասխանի թղթոյն կաթողիկոսին ասուրոց Յաղագս թոնդրակեցոց» պրվածքից, Անանիա Շիրակացու, Առաքել Սյունեցու գործերից, Վարդան Այցելցու առակներից և այլն:

Թարգմանական գործերից են Կյուրեղ Երուսաղեմացու, Բարսեղ Կեսարացու, Հովհանն Ռոկերերանի, Եվսեբիոս Կեսարացու, Գրիգոր Աստվածարանի, Սոկրատ Մքոլաստիկոսի, Նոննոսի, և ուրիշների աշխատություններից զանազան պատառիկներ:

Մատենադարանի ձեռագիր պատառիկները կարևոր նշանակություն ունեն հայերեն գրերի հին տեսակները ուսումնասիրելու տեսակետից, հատկապես այն պատճառով, որ մեր ամենահին ձեռագրերը դարերի արհավիրքներին զոհ են գնացել և այժմ աշխարհում մեզ հասած հնագույն հայերեն ձեռագիրը, դա Մատենադարանում պահպանվող Լազարյան կոշված Ավետարանն է, զրված 887 թ. Սահակ Վանանդեցու կողմից. Բայց Մատենադարանում գտնվող ինչպես պատառիկներում, այնպես էլ պահպանակներում կան այնպիսի հատակոտորներ, որոնք շատ ավելի հին են քան մեր թվակիր հնագույն գրչագիրը:

Պատառիկները մեծ արժեք ունեն հատկապես մեր հնագույն հեղինակների աշխատություններում հետագայում ներմուծված սխալները ուղղելու դորձում: Փաստ է, որ 5-րդ դարի և հետագայի մեր նշանավոր հեղինակների գործերը մեզ հասել են միայն ուշ շրջանի արտադրությունների միջոցով: Այս է պատճառը, որ հաճախ սխալներ և կամ հավելումներ են մուտք գործել մեր նշանավոր հեղինակներից ոմանց գործերում: Պատառիկներում, սակայն, կան հատվածներ Աղաթանգեղոսից, Մովսես Խորենացուց, Եղիշեից և այլ հեղինակներից, որոնք ընդօրինակված են 8—10-րդ դդ. և անհամեմատ հին են, քան հիշյալ հեղինակներից մեզ հասած ամբողջական ձեռագիր աշխատությունները:

Հրատարակության համար պատրաստում ենք Մատենագրանի ձեռադիր պատառիկների հնագրական և բնագրագիտական արժեքին նվիրված մի տանձին ընդարձակ աշխատություն։ Առաջին, սույն հողվածով ցանկանում ենք կանգ տոնել պատմահայր Մովսես Խորենացու Պատմության մեզ հասած հնագույն միայն մի քանի պատառիկների վրա։ Խորենացու Պատմության այդ բեկորները արժեքավոր են ոչ միայն հնագրական առումով, այլ հատկապես բացառիկ նշանակություն ունեն բնագրագիտական տեսակետից։

* * *

Մատենագրանի հայերեն ձեռադիր պատառիկների հավաքածուում գրանցվում են նաև Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» հոյակապ աշխատության մի քանի հնագրաբաններկան երկաթագիր մագաղաթյա պատառիկներ։ Ինչպես հայտնի է, Հայ բանասիրությանը, Խորենացու Պատմության մեզ հասած հնագույն ամրողական ձեռագիրը, դա Մատենագրանում 2865 համարի տակ պահպանվող ձեռադիրն է, արտագրված ԺԴ դարում։ Այսպիսով, միանգամայն պարզ է, որ Խորենացու Պատմության լուրաքանչյուր պատառիկի հայտնաբերումը, մեծ հետաքրքրություն կարող է ներկայացնել Հայ բանասիրությանը, ոչ միայն այն բանի համար, որ նրանք լինելով գրված մեսրոպյան երկաթագրով, բազմաթիվ հարյուրամյակներով հին են, քան մեր հիշատակած Խորենացու հնագույն ամրողական ձեռագիրը, այլև այդ պատառիկները բնադրագիտական տեսակետից հնարավոր է, որ լուրջ ճշտումներ ընձեռնեն Խորենացու բնագրում և մաքրեն այն հետագա դարերում արտագրողների կողմից կատարիված ընդմիջարկություններից։ և աղավաղումներից։

Մովսես Խորենացու նորահայտ պատառիկներից առաջինը, դա № 314 հատուկուորն է։ Սա անցյալում համարվել էր Ճաշոց զրբի մաս։ Այդ պատառիկը հին խմբագրությամբ հասած մի ճառընտրի մասնիկ է։ Պատառիկում կան հատվածներ Աստվածաշնչի նոր կտակարանից (Փօլոսի Բ Կորընթ. Բ 14) Դավիթ Թվնեցու նահատակությունից։ Երրորդ հատվածը վերաբերում է Նիկիայում գումարված տիեզերական եկեղեցական ժողովին և համապատասխանում է Մովսես Խորենացու Պատմության դիտ։ Հրատարակության Բ գրքի Դ գլուխին (էջ 240—241)։ Մաղաղաթյա սույն պատառիկը երկայուն է, տողերի քանակն է 20—23, նու վերեից ու մի կողմից կտրված է, որի պատճառով մի շաբթ տողեր և տառեր զոհ են գնացել։ Պատառիկը ներքեմի կողմից ևս պատառութված է, որի պատճառով էլ պակասում է երեք տող։ Պատառիկի մեծությունն է 26×18,5 սմ։ Մագաղաթը տեղ-տեղ դեղնած է ու սևացած։ Ինչպես երեսում է պատառիկի վրայի անցքերից, նա ժամանակին դործ է ածվել մի այլ ձեռագրի կողերին որպես պահպանակ։ Պատառիկը զրված է միջին մեսրոպյան երկաթագրով և իր հնագրական տվյալներով պետք է որ դրված լինի Ծ—ԺԱ դարերում։

Խորենացու Պատմությանը վերաբերող մեր երկրորդ պատառիկը, դա № 1221 երկու թերթերից բաղկացած հատակուորն է, որը Խորենացու Պատմության երկրորդ զրքի ցանկն է։ Գրված է մագաղաթի վրա միջին մեսրոպյան երկաթագրով։ Պատառիկի մեծությունն է 21×16,5 սմ և 23×14,5 սմ, իսկ տողերի քանակն է 13—19։ Այս հատակուորներն էլ անցյալում որպես պահպանակ են օգտագործված եղել։ Մրանք հավանական է, որ Խորենացու պատ-

սիկների մեջ հնագույնը լինեն և պատկանում են թ—ժ դդ. գրչության։ Սույն պատառիկները երկու անգամ են արժանացել հրատարակության։ Խորենացու սույն ցանկում բացակայում են Պատմության երկրորդ գրքից երեք գլուխներ։

Խորենացու Պատմության երրորդ մեր պատառիկը, զա № 1376 հատակուտորն է և ապահովաբար ձառընտրի մաս է։ Պատառիկում կա մի հատված նոր կտակարանից (Պօղ. Երր. ԺԳ.), իսկ Խորենացուց մեջ է բերված «Վկայաբանություն Նունեա և Մանեա և ընկերացն» հատվածը, և որը համապատասխանում է պատմահոր դիտական հրատարակության երկրորդ գրքի 29 գլխին (էջ 231—232)։ Պատառիկը երկսյուն է, մեծությունն է՝ $25,5 \times 21,5$ սմ, նրա տողերի քանակն է 24 և գրված է մագաղաթի վրա միջին մեսրոպյան երկաթագրությամբ։ Սույն պատառիկն էլ ժամանակին օգտագործվել է որպես պահպանակ։ Հատակուտորն է Սա բաղկացած է երկու թերթից, որոնց մեծությունն է՝ 29×20 և 25×20 սմ։ Գրված է մագաղաթի վրա միջին մեսրոպյան երկաթագրությամբ։ Սույն պատառիկն էլ ժամանակին օգտագործվել է որպես պահպանակ։ Տողերի քանակն է 21։ Պատառիկը համապատասխանում է Խորենացու պատմության դիտ։ Հրատարակության երրորդ գրքի ԾԱ, ԾԲ և ԾԵ գլուխներին (էջ 324—326 և 334—335) և բովանդակում է Հետելյալ նյութերը։

Թուղթ Արտաշրի առ Վուաճապուհ, Յաղագս Դանիելի նշանագրաց, թուղթ

Այն տապահ անդամ հրատարակել է Մատենադարանի Զեռագրական բաժնի նօրինին վարիչ Հ. Մանվելյանը «Գրական թերթ»-ում, 1938, № 51 (Երևան)։ Կրկին հրատարակել է, կցելով նաև Խորենացու Պատմությունը բովանդակող երկու ոլանդանակներ, պրոֆ. գոկո. Ա. Արքահամբյանը, «Էջմիածին», 1—2, 1950, էջ 44—57։

Հ զենք կայող համաձայն լինել ոլրոֆ։ Ա. Արքահամբյանի այս պատառիկի ժամկետ համաձայն եղբակացության գ կետի հետ։ ըստ որի «Պատառիկների համեմատական ուսումնասիրությունից ոլարդվում է, որ պատմահոր երկրորդ գրքի երեք գլուխները հետագա զարերում լոցված ընդմիջարկություն են հանդիսանում» (Պրոֆ. գոկո. Ա. Արքահամբյան «Խորենացու պատմության մագաղաթյան հնագույն որատառիկները», «Էջմիածին», 1—2, 1950, էջ 57)։ Մատենադարանում կան Խորենացու մեզ հայտնի ձևապրեր, որոնց ցանկերում զարձյալ չկան հիշյալ երեք գլուխները, սակայն նրանց պատմությունը լրիվ զտնվում է հիշյալ ձեռագրերում։ Այս հարցում ոլրոֆ. Ա. Արքահամբյանը միանդամայն ճիշտ էր վերաբերվել իր եղբակացության նախորդող էջում, երբ գրել էր հետելյալը. «Մեզ մնում է որատասխանել մի հարցի ևս. նշված երեք գլուխները պակասում են միայն զլաւացանելում, թե բուն որատմության մեջ աս նրանք չկան։ Պատառիկի հիման վրա, գմբախտարար, մենք ի վիճակի չենք որատասխանել այդ հարցին, որովհետեւ մեր ձեռքի տակ չունենք որատմության տեքստը, սակայն Հայկական ԱՍՏ Մատենադարանի № 1439 ձեռագիրը ունի այդ գլուխների որատմությունը, միայն դրանք տուանձին խորագրի տակ չեն գրված, այլ միացված են մյուս գլուխներին» (նույն տեղում, էջ 56)։

Սահակայ առ Անտոլիոս, և Թուղթ Թէոդոսի առ Սահակ: Պատափիկը իր հնագրական հանդամանքներով պատկանում է Ժ—ԺԱ դարերին:

Վերջերս հնագրական մանրազնին համեմատության միջոցով մեզ հայտնի դարձավ, որ վերոհիշյալ, պատափիկի գրչությունը ունեցող երկու այլ բնեկորներ գտնվում են Մատենադարանի № 9324 ձեռագրում (որը մեծ մասամբ հնատիպ Մաշտոց է) և, որոնք մի ժամանակ օգտագործվել են որպես պահպանակ, բայց այժմ արդեն անջատված են: Պատափիկները գրված են մադաղաթի վրա միջին մեսրոպյան երկաթագրով: Նրանց տողերի քանակն է 18—21, իսկ մեծությունն է $26 \times 18,2$ սմ և $25,3 \times 19,7$ սմ: Գրությունն է երկսյուն, 1ա թերթը մասամբ եղծված է:

Այսպիսով պարզվում է, որ թե՛ ձեռագրի պահպանակները և թե՛ քիչ առաջ վերևում հիշատակված պատափիկի երկու թերթերը երկաթագրով գրված Մովսես Խորենացու ամբողջական մի ձեռագիր պատմության մաս են կազմել, սակայն այժմ ամբողջ ձեռագրից դանազան հանապարհներով մեզ են հասել միայն 4 թերթ, այն էլ մասամբ կտրատված վիճակում:

Եթե Խորենացու № 1411 պատափիկները վերաբերում են պատմության երրորդ գրքի ԾԱ, ԾԲ և ԾԶ գլուխներին, ապա սույն պահպանակները պատկանում են ուստմության առաջին գրքի Դ գլուխին և երրորդ գրքի վերջին մասին: Այդ վերջին հատվածը Խորենացու ողբից է¹:

Պատափիկների հավաքածուի 1385 համարի տակ գտնվում է նաև Խորենացու պատմության մի այլ թերթ: Այն գրված է թղթի վրա, բոլորգրով, տողերի քանակն է 29, գրությունն է երկսյուն, մեծությունն է 27×31 սմ, պատափիկի վերեի մասը մասամբ վնասված է, որի հետեանքով մի քանի բառեր կտրված են: Սույն թերթը համապատասխանում է Մ. Խորենացու գիտ. Հրատարակության առաջին գրքի ԺԵ—ԺԶ գլուխներին (էջ 49—52) և բովանդակում է հետեւյալ նյութերը.—«Յաղակս Արայի և մահուանն նորա պատերազմաւ ի Շամիրամայ» գլուխի վերջի մասը «Թէ որպէս յետ մահւանն Արայի Շամիրամ շինէ զբաղաբն եւ զանպարտակ զիտոյն և զիւր [տունն]» գլուխի սկզբի մասը:

Մատենադարանի № 1875 ձեռագրի երկամատիկը մեկ թերթանոց պահպանակը ևս Մովսես Խորենացու պատմությունից է, գրված է միջին մեսրոպյան երկաթագրով՝ մադաղաթի վրա, տողերի քանակն է 29, մեծությունն է $33,3 \times 33$ սմ: Տեղունակ մասամբ եղծված ու սեղածած է: Հատվածի խորագիրն է «Վելայաբանութիւն սրբոցն Նունեայ և Մանեայ, Մովսեսի Խոյացունացոյ պատմութիւնէ» համապատասխանում է Խորենացու գիտական հրատարակության Բ գրքի ԶԶ գլուխին (էջ 231—234)²:

¹ Մ. Խորենացու այս վերջին երկու պահպանակները հրատարակվել են զարձյալ պրոֆ. Ա. Աբրահամյանի կողմից («Էջմիածին», 1—2, 1950, էջ 44—57): Հրատարակված հոդվածում պահպանակների համարը գժրախտաբար սխալ է նշանակված. Նշված է որպես № 9234, այնինչ պետք է լինի 9324: Նույնպես խառնված են նաև սյունակները. էջ 51-ի «Առաջին պատափիկ», երկրորդ էջ, երկրորդ սյունակը-ը պետք է տեղափոխել էջ 52, իսկ այնտեղ զետեղված «Առաջին պատափիկ», երկրորդ էջ, առաջին սյունակը-ը պետք է տեղափոխել էջ 51: Նկարագրության մեջ ևս (էջ 45) երկրորդ պատափիկի բովանդակությունը շփոթված է առաջին պատափիկի հետ: Հրատարակված ընտարքում մի շարք բառեր մասամբ եղծված լինելու պատճառով չեն կարդացվել, որոշ թվով կտրված տառեր վերականգնելիս չեն առնված փակազմերի մեջ, են: Մենք այդ ոլանպանակները ևս սույն հոդվածում հրատարակում ենք հնարավոր եղածին չափ հարազարորեն:

² Ակադ. Մտ. Մալիխասյանցը իր «Խորենացու առեղծվածի շուրջը» (Երևան, 1940, էջ 127) գրքում վերոհիշյալ պատափիկից մի քանի մեջբերումներ է արել:

* * *

Խորենացու Պատմության վերոհիշյալ նորահայտ պատառիկներից մի քանիսի, (որոնք դեռ չեն դարձել զիտական ուսումնասիրության առարկա) արտաքին հանգամանքները նկարագրելուց և դրշության ժամանակը մոտավորապես որոշելուց հետո, այժմ աշխատում ենք հարազատորեն մեջ բերել նրանց բնագրերը, զետեղելով նաև պատառիկներից երկուսի լուսանկարները։ Բնագրերի տողատակին նշում ենք այն կարեոր տարրերությունները, որոնք կան մեր պատառիկների համեմատությամբ Խորենացու պատմության զիտական հրատարակության մեջ («Մովսեսի Խորենացու Պատմութիւն Հայոց», աշխատութեամբ Մ. Արեգեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913 թ.), փակագծերում նշում ենք նաև Խորենացու Պատմության զիտական հրատարակությունը պատրաստողների կողմից օգտագործված այն բոլոր տարրերակները, որոնք համընկնում են պատառիկների ընթերցվածքներին։ Այս դեպքում մենք պահում ենք հրատարակիչների կողմից ընդունված պայմանական նշանները։

Պետ. Մատենադարանի № 9324 ձեռագրի պահպանակ
(Խորենացու զիտ. հրատ. առաջին դիրք, գլ. Գ—Դ, էջ 12—13)

Էջ 1ա, 1-ին սյունակ

ՅԱԿԶԲԱՆՆ. (Բ)Ա.38
ՍԿՍԱ.33 ԹԵՊԵՏ ԵՒ ԶԱ
(Ե)ԻԻ. ՄԻԱ.3Ն ԹԵ ՈՔ
ՇՆՈՐՉԱԿԱԼ ԻՄՈՅ ԳՏԱ
5 ՆԻՅԻ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՑ.
ՍԿՍԱ.33 ՅՈՐՈՅ ԵՒ ԱՅ
ՂՔՆ ՈՐՔ ՅԵԿԵՂԵՑԻՈԶ
ԵՒ ՈՅՔ ԸՍՏ ՔԻ ԱԻԵ
ԼՈՐԴՔ ՀԱՄԱՐԵԱԼ ԶԱՐ
10 ՏԱՔՆՈՅՆ ԵՐԿՐՈՐԴԵԼ
ՅԱՂԱԳՍ ՍԿԶԲԱՆՆ Ա
ՈԱՍՊԵԼՍ, ԲԱ.33 ԵԲԵ
ԶԿՆԻՍՆ ԶԺԱՄԱՆԱԿՍ
ԻՆՉ ԱՐԴԵՒՔ ԵՒ ԶԱՐՍ

Էջ 1ա, 2-րդ սյունակ

(...ՀԵԹԱՆՈՍԱ)

ԿԱՆ ԶՐՈՒՅԱ(ՏՐՈՒՅԲ)
ԻԻՆԱ. ՍԱԿԱ.3Ն ԵՒ Ի
ՆՈՅԱՆԷ ԶՈՐ ԻՆՉ
ՀԱԻԱՍԻՆ ԿԱՐՄԵՄՔ
5 ԱՌՆՈՒԼ:
Դ. ՅԱՂԱԳՍ ԶԻ ՈՉ ՍԱԿԱ ԱԴԱ
ՄԱ.3 ԵՒ ԱՅՂՈՅ ՆԱՀԱՊԵՏԱ
ՅՆ ՄԻԱԲԱՆԻՆ ԱՅՂՔ(Ե) Ի
ՊԱՏՄԱԳՐԱՅ:
10 ՅԱՂԱԳՍ ԱՐՄԱՏՈՅՆ
ՀԱՆՈՒՐՅ ՄԱՐԴԿՈՒԹԵ
Ա.Ն. ԿԱՄ ԹԵ ՀԱՃՈՅ
ՈՒՄԵՔ ԹՈՒԵՍՅԻ ԱՍԵԼ
ՄԱՅՐԻՆ. ՊԱՐՏ ԷՐ ՄԵԶ

- 1 Ի ԱԿԻՊՐՆ (Ը ԱԿՈՐԱՆՆ)
- 2 ԱԿԱՅՆ ԱԿՈՎԱՅՑ
- 3 ԲԷ, ՀԻՔ՝ ոք
- 4 ՉՆՈՐԴԱԿԱԼ ոք մԵՐՈԳԱ
- 5 Աշխատութեանց (Տի գտանիցի լեալ աշխատութեանց)
- 6 Եւ ԱԿՈՎԱՅՑ
- 6—7 այլքն
- 8—9 աւելորդ համարելով (Ձ համարեալ)
- 10 ԿԲԷ
- 11 ճամանակական
- 12 արդեալ
- 13 պուիսցի (Տի)
- 14 արդեօք

- * 6—9 տողերը՝ կարմիր թանաքով:
- 1 ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆՆ
- 7 Եւ այլոց
- 8 միաբանեցան
- 8 այլքն
- 11 հանուր (Տի)
- 11—12 մարդկութեանս
- 12 ԲԷ
- 13 բուիսցի (Տի)

15 ՅԱՅՏՆԻՍ (ՈՐՈՒՄ) ԵՒ ԱԾ(ԱՅ) ԻՆՔՆ Ի ՃԱԼ ԳԱՅՅԵՆ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔՆ ԲԱ
ՆԻՅ, ՄԻՒԶԵԻ Ի ՀԱՐ

17 Աղամամութիւնը

15 ՍԱԿԱԲԻ ԻՆՉ ԱՆՑԱՆԵԼ
ԲԱՆԵԻՔ, ԹԵ ԸՆԴԵՐ ՀԱ
ԿԱՌԱԿ ՀՈԳԻՈՅՆ (ԽՈՐ)
ՀԵ(ԱԼ ԱՆՄԻԱԲԱՆԵՑԱՆ)

16 բանիւ
16 թէ
16 ընդէր

№ 9324 ձեռագրի պահպանակ

1չ 1թ, 1-ին սյունակ

ԵՒ ԶԲԱԶՄԱՎԵՊԵՆ, ԵՒ

ԶԱԲ(Ի)ԻԴԵՆԵԱԼ, ԿԱՄ Զ

ՆԻՅՆ ԻՆՔՆ ՆԱԻԱԿԱՌՈՒ

ՑԵՆ, ԵՒ ԶԱՅՂՈՅ ՆԱՀԱ

5 ՊԵՏԱՅՆ ՈՉ ՄԻԱՅՆ ՎԱ

ԱՆ ԱՆՈՒԱՆՅՆ ԵՒ ԺԱՄԱ-

ՆԱԿԱՅ, ԱՅԴ, ԵՒ ՎԱՄՆ

(ՈՉ) ՍԿԻԶԲՆ ԶԱԲԻ Ի

ՄԵԽԶ ՀԱԲԱՏԱՐՄԱՅԵ

10 ԱԼՆ ԿԱՐԳԵԼՈՅ ԱԶԳԻՄ

ՄԱՐԴԿԱՆ, ՔԱՆԶԻ Ա

ԱԼ Ա(ԲԻՒԴԵ)ՆՈՍ ՀԱՆ

ԳՈՅՆ ԱՅՂՈՅՆ ԱՅՍՊԵ(Ա)

(ԵՒ) ԶԵԱ ԱՄԵՆԱԿԱԼՆ

15 ԱԾ(Ե)ՅՈՅՅ ՀՈՎԵԻ ԵՒ Ա

ՈԱԶՆՈՐԴ ԺՈՂՈՎՐ

ԴԵԱՆՆ ՅԵՏ ՈՐՈՅ Ա

ԱԼ ԹԱԳԱԻՈՐԵԱՅ

16 Աղամամութիւնը

1 Հիք՝ ա., եւ.

2 ՊԱՐԲԻՇԻՆԱ

3—4 ՊԱԿԱԿԱՆԵՐԵՆ

4 Կ ՊԱՄՊ

6 ԱՆՈՒԱՆԾ

7 ԱՐԼ Կ

9—10 ՀԱԿԱԿԱՐԺԱՑԵԱԼՈ

10—11 Ազդի ԺԱՐԴԿԱՆ (Ա)

13 ԱՐԼՊԵՆ

14 ԱՖԻՆԱԼԱՆԱՅՆ ՓԻ. ԱՖԻՆԱԼԱՐԵՒ-Ի:

15 ՍԱԿԱԲԻ ԻՆՉ ԱՆՑԱՆԵԼ

ԲԱՆԵԻՔ, ԹԵ ԸՆԴԵՐ ՀԱ

ԿԱՌԱԿ ՀՈԳԻՈՅՆ (ԽՈՐ)

ՀԵ(ԱԼ ԱՆՄԻԱԲԱՆԵՑԱՆ)

16 ԲԱՆ ԲՈՒՐԺԱՆ Առ ի յարեղականէ

17 Աղամամութիւնը

18 Աղամամութիւնը

19 Աղամամութիւնը

20 Աղամամութիւնը

21 Աղամամութիւնը

22 Աղամամութիւնը

23 Աղամամութիւնը

24 Աղամամութիւնը

25 Աղամամութիւնը

26 Աղամամութիւնը

27 Աղամամութիւնը

28 Աղամամութիւնը

29 Աղամամութիւնը

30 Աղամամութիւնը

31 Աղամամութիւնը

32 Աղամամութիւնը

33 Աղամամութիւնը

34 Աղամամութիւնը

35 Աղամամութիւնը

36 Աղամամութիւնը

37 Աղամամութիւնը

38 Աղամամութիւնը

39 Աղամամութիւնը

40 Աղամամութիւնը

41 Աղամամութիւնը

42 Աղամամութիւնը

43 Աղամամութիւնը

44 Աղամամութիւնը

45 Աղամամութիւնը

46 Աղամամութիւնը

47 Աղամամութիւնը

48 Աղամամութիւնը

49 Աղամամութիւնը

50 Աղամամութիւնը

51 Աղամամութիւնը

52 Աղամամութիւնը

53 Աղամամութիւնը

54 Աղամամութիւնը

55 Աղամամութիւնը

56 Աղամամութիւնը

57 Աղամամութիւնը

58 Աղամամութիւնը

59 Աղամամութիւնը

60 Աղամամութիւնը

61 Աղամամութիւնը

62 Աղամամութիւնը

63 Աղամամութիւնը

64 Աղամամութիւնը

65 Աղամամութիւնը

66 Աղամամութիւնը

67 Աղամամութիւնը

68 Աղամամութիւնը

69 Աղամամութիւնը

70 Աղամամութիւնը

71 Աղամամութիւնը

72 Աղամամութիւնը

73 Աղամամութիւնը

74 Աղամամութիւնը

75 Աղամամութիւնը

76 Աղամամութիւնը

77 Աղամամութիւնը

78 Աղամամութիւնը

79 Աղամամութիւնը

80 Աղամամութիւնը

81 Աղամամութիւնը

82 Աղամամութիւնը

83 Աղամամութիւնը

84 Աղամամութիւնը

85 Աղամամութիւնը

86 Աղամամութիւնը

87 Աղամամութիւնը

88 Աղամամութիւնը

89 Աղամամութիւնը

90 Աղամամութիւնը

91 Աղամամութիւնը

92 Աղամամութիւնը

93 Աղամամութիւնը

94 Աղամամութիւնը

95 Աղամամութիւնը

96 Աղամամութիւնը

97 Աղամամութիւնը

98 Աղամամութիւնը

99 Աղամամութիւնը

100 Աղամամութիւնը

101 Աղամամութիւնը

102 Աղամամութիւնը

103 Աղամամութիւնը

104 Աղամամութիւնը

105 Աղամամութիւնը

106 Աղամամութիւնը

107 Աղամամութիւնը

108 Աղամամութիւնը

109 Աղամամութիւնը

110 Աղամամութիւնը

111 Աղամամութիւնը

112 Աղամամութիւնը

113 Աղամամութիւնը

114 Աղամամութիւնը

115 Աղամամութիւնը

116 Աղամամութիւնը

117 Աղամամութիւնը

118 Աղամամութիւնը

119 Աղամամութիւնը

120 Աղամամութիւնը

121 Աղամամութիւնը

122 Աղամամութիւնը

123 Աղամամութիւնը

124 Աղամամութիւնը

125 Աղամամութիւնը

126 Աղամամութիւնը

127 Աղամամութիւնը

128 Աղամամութիւնը

129 Աղամամութիւնը

130 Աղամամութիւնը

131 Աղամամութիւնը

132 Աղամամութիւնը

133 Աղամամութիւնը

134 Աղամամութիւնը

135 Աղամամութիւնը

136 Աղամամութիւնը

137 Աղամամութիւնը

138 Աղամամութիւնը

139 Աղամամութիւնը

140 Աղամամութիւնը

141 Աղամամութիւնը

142 Աղամամութիւնը

143 Աղամամութիւնը

144 Աղամամութիւնը

145 Աղամամութիւնը

146 Աղամամութիւնը

147 Աղամամութիւնը

148 Աղամամութիւնը

149 Աղամամութիւնը

150 Աղամամութիւնը

151 Աղամամութիւնը

152 Աղամամութիւնը

153 Աղամամութիւնը

154 Աղամամութիւնը

155 Աղամամութիւնը

156 Աղամամութիւնը

157 Աղամամութիւնը

158 Աղամամութիւնը

159 Աղամամութիւնը

160 Աղամամութիւնը

161 Աղամամութիւնը

162 Աղամամութիւնը

163 Աղամամութիւնը

164 Աղամամութիւնը

165 Աղամամութիւնը

166 Աղամամութիւնը

167 Աղամամութիւնը

168 Աղամամութիւնը

169 Աղամամութիւնը

170 Աղամամութիւնը

171 Աղամամութիւնը

172 Աղամամութիւնը

173 Աղամամութիւնը

174 Աղամամութիւնը

175 Աղամամութիւնը

176 Աղամամութիւնը

177 Աղամամութիւնը

178 Աղամամութիւնը

179 Աղամամութիւնը

180 Աղամամութիւնը

181 Աղամամութիւնը

182 Աղամամութիւնը

183 Աղամամութիւնը

184 Աղամամութիւնը

185 Աղամամութիւնը

Պետ. Մատենադարանի ձեռագիր պատառիկ № 1411
(Խորենացու գիտ. Հրատ. Երբորդ գիրք, գլ. ՍԱ, ԾԲ, էջ 324—326)

Էջ 1ա, 1-ին սյունակ

Ե՞ւ 1ա, 2-րդ սյունակ

(...bulbul)

ՄԱՍՆ ՊԱՐՍԻՑ ՎՈՒ
ՄԱՅ. ԵՒ ԶՄԱՍՆ
ՅՈՒՆԱՅ ԱՐԿԱԴԵԱՅ:
ՄՅ. ՅԱՂԱԳՍ ԴԱՆԵԵԼԻ ՆՇԱՆԱԳՐԱՅ:
5 ՅԱՅՆՄ ԺԱՄԱՆԱԿԻ
ՀԻՒԱՆԴԱՅԵԱԼ ԱՐԿԱԴ
ԵՒ ՇԱՐԺՄԱՆՅ ԱՀԱԳ
ՆԻՅ ԵՒ ՀՐԿԻՉՈՒԹ
ԵԱՆՅ ԵՂԵԱԼ Ի ԲԻՒՋ
10 ԱՆԴԻՈՆ ՈՐ ՅԱՂԱԳՍ
ՄԵՍԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ
ՇՓՈԹԵԱԼ ԼԻՆԷՐ
ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆՆ
ՅՈՒՆԱՅ. ԵՒ ԶԱՒՐՔՆ
15 ԸՆԴ ՄԻՄԵԱՆՍ ՊԱՏ
ԵՐԱԶՄԵԻՆ ԵՒ ԸՆԴ
ՊԱՐՍԻՑ. ՎԱՍՆ ՈՐ
ՈՅ ՎՈԱՄ ՀՐԱՄԱՅ
ԵԱՅ ՎՈԱՄՇԱՊՀՈՅ
20 ԹԱԳԱԻՈՐԻՆ ՀԱՅ
ՈՅ ԻՉԱՆԵԼ Ի ՄԻՉԱ

ՅՈՒՅԵԱԼ ԿԱՐԳԵՍ(ՅԵ) 1
 ԶՆՈՍՍ. ԵՒ ՀԱՄ(Ա.Բ) 2
 ԵՐԿԱՔԱՆՉԻՐՈՑ(Ն) 3
 ՀԱՏՅԵ ԳՈՐԾԱԿԱԼ(ԱՅՆ) 4
 5 ԵՒ ԻԶԱՆԵԼ ՆՈՐԱ (Ի ԿԱ.Բ)
 ԳԵԼ ԶԱՅՍ ԱՄԵՆ(ԱՅՆ)
 ՈՉ ՓՈՔՐ ԻՆՉ ԿՐ(Է.Բ)
 ԶՈՇԽԱՏՈՒԹԻՒՆ
 ՎԱՄՆ ՔԱՐՏՈՒՂԱ(ԲԻ)
 10 ԶԻ ՄԻՆՉԵՒ ԳՆԱ(Յ)
 ՄԵՍՐՈԲ ՅԱՐՔՈՒ(ՆԱ)
 ԿԱՆ ԴՐԱՆԵՆ ՈՉ Ո(Ք)
 Ի ՃԱՐՏԱՐԱՅ ՊՏ(Ա.)
 ՆԵՐ ԲԱՆ Ի ՊՊՐԱ(Յ)
 15 ՔԱՆՉԻ ՊԱՐՄԿԱՆ(ԱԻՆ)
 ՎԱՐԵԻՆ ԳՐՈՎ.
 ՎԱՄՆ ՈՐՈՅ ՄԱ(Տ)
 ՈՒՅԵԱԼ ԱՌ ԱՐՔ(ԱՅՆ)
 ՈՄՆ ՀԱՐԷԼ ԱՆՈ(ԻՆ)
 20 ԿՈՉԵՅԵԱԼ. Խ(ՈՍ)
 ՏԱՆԱՅՐ ՀՈՅԿ

- 1 զմասինն Պարսից
- 2—3 և զմասինն Ըունաց
- 4 ՄՌ Յաղագս Դաշտելեաւ, Նշանազբութեանն (ցւՏ Դանիէլի, Էլ Նշանազբաց)
- 14 զօրքն
- 15—16 պատերազմէին
- 16—17 ընդ պարսս (Խ)
- 19—21 Վռամշապհոյ մերում Բադաւորի իշանել

Quinn N. # 1411

Էջ 1թ, 1-ին սյունակ

1_g 1p, 2-րդ սլունկ

(vGUVU)

ԳԻՐ ԼԵԶՈՒԻՒ ՅԱՐ
 (Մ)ԱՐԵԱԼ Ի ԴԱՆԻԵԼԷ
 (Ե)ՊԻՍԿՈՊՈՍԷ ՅԻՒՐ
 (Մ)Է ՄԵՐՉԱԽՈՐԷ. ԶՈՐ
 5 (ՈՎ) ԱՆՓՈՅԹ ԱՐԱՐԵ
 (Ա)Լ ԱՐՔԱՅԻՆ ԵՒ ԵԼ
 (Ե)ԱԼ Ի ՀԱՅԱ ԳՏԱՆԷ
 (Ժ)ՈՂՈՎԵԱԼ ԱՌ ՄԵՇՆ
 (Մ)ԱՀԱԿ ԵՒ ՄԵՍՐՈԲ
 10 (Զ)ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԽՍ
 (ԶԱ)ՄԵՆԱՅՆ ՀՈԳԱԼ ԶԸ
 (Գ)ԻՒՏ ԴՊՐՈՒԹԵԱՆ
 (Հ)ԱՅՈՅ. ԶՈՐ ԱՐՔԱՅ
 (ԻՒ) ԶԳԱՅՈՒՑԻՆ.
 15 (ԵՒ) ՆԱ ՊԱՏՄԵԱՅ ԶԱ
 (ՍԱ)ՅԵԱԼՆ ՎԱՆԱԿԱՆ
 (ԻՒ). ԶՈՐ ԻԲՐԵԻ ԼՈՒԱՆ
 (Բ)ԱԿԱՆՉԵԻՆ ԶՆԱ
 (ՓՈ)ՅԹ ԶԱՅՆՊԻՍԵԱ
 20 (ՑՆ) ԱՌՆԵԼ ՊԻՏՈՅԵՑ
 (ՎԱ)Ն ՈՐՈՅ ԱՌԱՐԵԱՅ

ԶԱՅՐ ՄԻ ՊԱՏՈՒԱ
ԿԱՆ ՅԱՇԽԱՐՀԵՒ ԵՒ
ՀԱԻՍԱՐԻՄ ԻԻՐ. ԿԱ
ԴՐԻՆԻ ԱԶԳԱԻ ՎԱՐՃԵԴ
5 ԱՆՈՒՆ ՅՈՅԺ ՓԱՓԱ
ԳԱԻ ԶՆՈՐԻՆ ԳՈՐԾՈՅ
ԱՈ ՀԱԲԵԼՆ ԱՅՆ. ԶՈՐ
ԱՌԵԱԼ ԵՒ ԵՐԹԵԱԼ ՆՈ
ՎԱԻ ՀԱՆԴԵՐՉ ՔԱԶԱ
0 ՄՏԱՅԵԱԼ Ի ԴԱՆԻԷԼ
ԿԱՐԴԵԱԼ Ի ԶԵԽՈՅ ԱԻ
ՐԻՆԱԿԻ ՅՈՒՆԱԿԱՆ
ԻՆ ԶՎԱՂՆԶՈՒՅՑ ԳՐԵԱԼ
ԾԱՐԱԳԻՐՍ ՏԱՄԻՑ
5 ԵԿԵԱԼ ԵՏՈՒՆ ՅՄԵՇՆ
ՍԱՀԱԿ ԵՒ ՅՄԵՄՐՈՐ.
ՈՐՈՅ ԱՌԵԱԼ ԵՒ ԹԵՒ
ԱՇԵԼՈՎ ԸՆԴ ՆՈՍԱ.
ԵՒ ՏՂԱՅՍ ԶՈՄԱՆԱ ԱԱ
0 ԿԱԻՍ ՏԵՂԵԿԱՅԵԱԼ
ԳԻՏԱՅԻՆ. ՈՉ ԼԻՆԵ

- | | |
|------------------------------------|-----------------------------------|
| 1 Եղուաց առնել նշանադիր. | 2 յաշխարհիս փխ. յաշխարհէս-ի |
| 3—4 յիւրմէ | 3—4 խազունի ազդաւ վահճիճ անուն |
| 6 արքայի (ա/Տ) | (Ա. Վարձիճ) |
| 9 Մեսրոպ (cei) | 5—6 յոյժ փափաղող նորին զործոյ |
| 10—11 դամենայն հոդիսկոպոսունս (d) | 9—10 ըաջ հմտացեալ |
| 13—14 դոր զզաւցուցին արքային (Այօ) | 10 Դանիելէ |
| 15—16 սպասմեաց նոցա զասացեալսն | 11 կարդեալ ըստ ձևոյ |
| 18 թախանձէին | 11—12 օբինակի |
| | 13 զվագնջուցն (Տիգ) |
| | 14 շարազիր |
| | 16 և Մեսրոպ |
| | 17 որոց ռւուեալ փիւ. որոց առեալ-ի |
| | 19—20 Եւ չիք, ազայոց զամս սակաւս. |
| | փիւ. ազայս զոմանս սակաւս |

Պատառիկ № 1411

(Կորինացու զիտ. Հրատ. Երրորդ զիրք, գլ. Ծկ, էջ 334—335)

Էջ 2ա, 1-ին սյունակ

Էջ 2ա, 2-րդ սյունակ

[ԲՈՒՂՋ ՍԱՀԱԿԱՅ

ԱՌ ԱՆԱՏՈԼԻՈՒՄ]

ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍՍ.
 ՊԵՏ ՀԱՅՈՅ ՔԱԶԻ ԶԱՀ
 ՐԱՎԱՐԻԴ ԱՆԱՏՈՂԻ
 ԿՆԴԱԼ. ԾՆՈՐՉՈՒՆ
 5 ԻՄ ՑԱՅ ՑԱՂԱԳՍ ՔԵԶ
 ՊԱՏՐԱՍՏԵԼՈՅ ՄԵԶ
 ՅԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ.
 ՎԱՄՆ ՈՐՈՅ ԶԳԱՅՈՒՅԱ
 ՆԵՄ ԶՀԱՅԹԱԹԱՆՍ
 10 ՄԵՐՈՅ ՆԵՂՈՒԹԵԱՆՍ.
 ԱԹԱՔԵՑԻ ԶՈՒՍՈՒՅՈ
 ՂԴ ՄԵՐ ԶՄԵՍՐՈԲ, ԵԻ
 ԶԹՈՌՆ ԻՄ ԶՎԱՐԴԱՆ
 Ի ԴՈՒՌՆ ԱՐՔՈՒՆԻ.
 15 ԵԻ ԱՂԱԶԵՄ ԶՔՈ ՔԱԶ
 ԱԽԹԻՒՆԴ ԶԵՄՆՏՈՒԻ
 ՆԵԼ ՃԱՆԱՊԱՐԺԻԴ
 ԻՂՋ ԼԵՐ.
 ԶԱՅՍ ՏԵՍ ԱՆԱՏՈՂ
 20 ԵԱ. ՄԻԱՆԳԱՄԱՅՆ
 ԵԻ ԶԼՈՒՐ ԱԹԱՔԻՆՈՒ

ԵԵԱԼ ՈՐ ՑԱՌԱԶԱԳ(Ո)
 ՅԵ ՀՆՉԵԱԼ ԶՆՄԱ(ՆԷ)
 ՈԶ ՓՈՔՐ ԱՐԱՐ ՆՈՅ(Ա)
 ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ, (ՄԻ)
 5 ՆՉԵԻ Ի ԶԵՄՆ ՓՈՓՈ(Խ)
 ԸՆԹԱԶԻՅ ԳՐԵԼՈՎ (Զ)
 ԳԱՅՈՒՅԱՆԿՐ ԿԱՅ
 ՍԵՐ. ԱՌ(Ն)ՈՒ ՀՐԱՄ(ԱՆ)
 ԱՐԺԱՆԱՊԵՍ ԱՌԱ(Ք)
 10 ԵԼ ՓՈՒԹՈՎ. ՎԱՄՆ (Ո)
 ԲՈՅ ԱՐԳԵԼԵԱԼ Ի ՔԱ(ՂԱ)
 ՔԻՆ ՄԵԼԻՏԻՆԻ ԶԲ(ԱԶ)
 ՄՈՒԹԻՒՆ ԱՇԱԿԵՐ(ՏԱ)
 ՅԵ ԶՈՐՍ ԸՆԴ ԻՆՔ(ԵԱՆ)
 15 ԱՇԵԱԼ ՀԱՆԴԵՐՁ (ԳԸԼ)
 ԿԱՒՈՐԱԿԻ ԻՒԹԵԱ(ՆՅ)
 ՂԵԽՈՆՏԻԻ. ԱՌ Ե(ՊԻՄ)
 ԿՈՊՈՍԻՆ ԱԿԱԿԱ(Յ ԹՈ)
 ՂՈՒ. ԵԻ ԻՒՐ ԱՌԵԱ(Լ Զ)
 20 ՄԵՍՐՈԲ ԵԻ ԶՎԱՐ(ԴԱՆ)
 ՏԱՅ ԵՊԻՍԿՈՊՈ(ՄԱՆ)

+ + + + + + + + + + + + + + + + + + +

1 Սահակ եպիսկոպոս Հայոց

2—3 զօրավարի Անատոլեայ

5 Աստուծոյ յաղաղս զքեղ (glosgts)

7 յաղաւինութիւն փիւ. յաղահովութիւն

9 զի ի հայթայթանս

12 զՄեսրուպ

12 և զիւ. եւ

15 և աղաշեմ

19—20 զայս տեսեալ Անատոլեայ.

2 հնչեցեալ էի զնմանէ.

3 ոչ փոքր ինչ արար

5 մինչե

6 զբով

6—7 զգացուցեալ կայսերն

8 Կ-Ն լրացնում ենք ինքներս

12 Մելիտինէ

15—16—17 զլխաւորաւն նոցա Դեսնդիւ

20 զՄեսրուպ (defl)

21 ցեղիսկոպոսն

№ 9324 ձեռագրի պահպանակ
(Խորենացու գիտ. Հրատ. Երրորդ դիլը, գլ. ԿԸ, էջ 359—361)

Է՞՞ 2ա, 1-ին սյունակ

Էջ 2ա, 2-րդ սյունակ

| | | |
|------------------------|--------|----------------------|
| ԿԵՐԱԽՆ | ԳՈՐԾԱԿ | ՈՈԲՈՎԱՄ ՄԵՐԺ (6) |
| ՑԱԻ, ԸՆԴ ՔԻ ԼԱԻ ԷՌ | | ՑԱԻ Ի ՄԵՐՄԷ ԺՈՂՈ |
| ՆՈՅԱ ԲՆԱԿԵԼ. ԵՒ | | ՎՐԴԵՆԷՆ. ԵՒ ՓՈ(Խ) |
| ՅԱԲՐԱՀԱՄԵԱՆՆ | | ԱՆՈՐԴԵԱՅ ՈՐԴԻՆ (ՆԱ) |
| 5 ՀԱՆԳՉԵԼ Ի ԳՈԳԱ. | | 5 ԲԱՏԱ ԵՒ ԶԱՅՐՆ (ԱՅ) |
| ԵՒ ՀՐԵՇՏԱԿԱՅՆ | | ԾԱԽԵԱՅ ՈՉ ԱՌԵՒ(Ս) |
| ՏԵՍԱՆԵԼ ԶՊԱՐԱԻ | | ԱՅԴ ԿԱՏԱՐՈՒՄ(Ե) |
| ՈՐՈՒԹԻՒՆՍ. ԲԱՅՅ | | ԺԱՄԱՆԱԿԻ. |
| ԱՆՀՈԳԱԻՂ ԴՈՒ ԱՅ | | ԵՂԻԱ ՀԱՄԲԱՐՁԱ(Ի) |
| 10 ԹԻՌԻԹԵԱՄԲ. ԵՒ | | 10 ԵՒ ԵՂԻՍԷ ՈՉ ՄՆԱՅ |
| ԵՂԿԵԼԻՔ ՄԵՔ ՈՐՔ ԶՐ | | ԿՐԿԻՆ ՈԳՈՎՆ |
| ԿԵԱԼ Ի ՀԱՅՐԵՆԻ ՎԵ | | ԱԻԾԱՆԵԼ. ԶՅԵՈՒ |
| ՐԱԿԱՅՈՒԹԵՆԷՆ. | | ԱՅԴ ԵՒ ԱԶԱՅԷԼ ՀՐ |
| ԶԻ ՈՉ ՈՐՓԷՍ Ի ՀՆ | | ԱԻՒՐԵՑԱԻ ԿՈՏՈՐ |
| 15 ՈՒՄՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ | | 15 ԵԼ ԶԻԷՂ. Ի ԳԵՐՈՒԻ |
| ԱՅԴ ԱՌԱԽԵԼ ՄԵՐ ՎԱ | | ԹԻՒՆ ՎԱՐԵՑԱԻ ՄԵ |
| ՏԲԱՐՈՒԹԻՒՆՍ. | | ԴԵԿԻԱ. ԵՒ ԶՈՐԱ |
| ՎԱՄՆ ԶԻ ՄՈՎԱԷՍ | | ԲԱԲԷԼ ՈՉ ՈՒՐԵՔ ԳՈ(Յ) |
| (Բ)ԱՐՁԵԱԼ ԼԻՆԻ Ի ՆՈ | | ՈՐ ՆՈՐՈԳԷ ԶՊԵՏ |
| 20 (Յ)ԱՆԷ. ԵՒ ՅԵՍՈՒ ՈՉ | | 20 ՈՒՐԻՒՆ. ԱՆՏԻՈ |
| (Ա)ՈԱԶՆՈՐԴԵԱ(Յ) | | ՔՈՍ ԲՈՆԱԴԱՏԷ |

1—2 և գործակցաւն
 2 լաւ է (նման է մասամբ Խ.)
 6 զհբեշտակացն
 9 անհոգող (Ը)
 9—10 այրիութեամբ
 11—12 որ զրկեալը եմք ի
 15 ժողովուրդն այն
 16—17 այլ առաւել մերս է թշուառու-
 թիւն.
 19—20 չիք՝ նոցանէ
 20—21 ոչ լաջորդէ առաջնորդել

Ն 3924 ձեռագիր պահպանակ, էջ 2ր

| Եջ 2ր, 1-ին սյունակ | Եջ 2ր, 2-րդ սյունակ |
|----------------------|-------------------------|
| (Հ)ԱՅՐԵՆԻՍ. եհ | ԶԲԱՆՆ ՀԱՐՑՆ ՓՈ |
| (Մ)ԱՏԱԹԻԱ. ՈՉ ԸՆԴ | ԽԱՆԱԿ ԾՆՆԴԵԱՆՆ |
| (Դ)ԻՄԱԿՅԵ. ՊԱՏԵՐ | ԵՒ ՍՆՆԴԵԱՆՆ. ՔԱՆ |
| (Ա)ԶՄ ԶՄԵԶ ՇՈՒՐՁ | ԶԻ ԾՆԱԻ ԶԻՍ ԻՒՐԵԱ |
| 5 (Պ)ԱՇԱՐԵԱՅ. ԵՒ ՄԱԿ | 5 ՆՅ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅ |
| (Ա.Բ)Է ՈՉ ՓՐԿԵ. ԱՅԺՄ | ԵՒ ՍՆՈՒՅԻՆ ԶԻՍ ԱՌ |
| ՄԱՐՏՔ Ի ՆԵՐՔՈՒԱՏ. | ԱՅՂՍ ԱՌԱՔԵԼՈՎ Ա |
| (Ա)ՐՀԱԻԻՐՔ ՀԵԹԱՆ | ՃԵՅՈՒՅԱՆԵԼ ԵՒ |
| ՈՍԱՅ. ԵՒ ՄԱՐՏՔ | ՄԻՆՉ ՆՈՔԱ ԶՄԵՐՆ |
| 10 (Հ)ԵՐՉՈՒԱԾՈՂԱՅ. | 10 ՅՈՒԱԱՅԻՆ ԴԱՐՁ. |
| ԵՒ ԽՈՐՉՐԴԱԿԱՆ | ԵՒ ՊԱՏՈՒԱՍԻՐԵԼ Ի |
| ԶԷ Ի ՄԻՋԻ ՈՐ ԽՐԱ | ՄՈՎ ԱՄԵՆԻՄԱՍ |
| ՏԷ ԵՒ ՅԱԻՐԻՆԷ Ի | ԱՐՈՒԵՍԻԻՍ. ԵՒ |
| ՊԱՏԵՐԱԶՄ. ԱԻԱՂ | ԿԱՏԱՐԵԼԱԳՈՅՆ |
| 15 ԶՐԿԱՆԱՅԱ. ԱԻԱՂ | 15 ՅԱՐՄԱՐՈՒԹԵԱՄԲ. |
| ԹՇՈՒԱՌԱԿԱՆ ՊԱ | ՀԱՄԱՅՆ ԵՒ ՄԵՔ ՓՈՒ |
| ՏՄՈՒԹԵԱՆՅԱ. | ԹԱՊԷՍ ԴԻՄԵՅԱՔ |
| (Ո)ՐՊԷՍ ԶԱԽՏԱ ՀԱՆ | Ի ԲԻՒԶԱՆԴԻՈՆ ՅՈՒ |
| (Դ)ՈՒՐԺԵՅԻՑ ԲԵՐԵԼ. | ՍԱՅԵԱԼՔ ՀԱՐՍԱՆ |
| 20 ԶԻԱՐԴ ԶԻՄ ՄԻՏԱ | 20 ԵԱՅ ՊԱՐԵԼ. ԱՆՎԵ(ՀԵԲ) |
| (Ե)Հ ԶԼԵԶՈՒՍ ՊՆԴԵ | ԵՐԱԳՈՒԹԵԱՄԲ Կ(ՐԹԵԱԼՔ) |

$\text{U}^{\text{m}} \text{a} \text{m} \text{a} \beta \text{f} \text{m} \text{j}$ $\text{n} \Sigma$ $\text{p}^{\text{m}} \text{q} \text{q} \text{f} \text{f} \text{m} \text{a} \text{l} \text{a} \text{j} \text{k}$

5 *uLus2wPrl*: (kbdeo)

8-9 արհաւիրը ի հեթանոսա

9-10 h *Amphipr* /r հերձուածուան

11. In favor of proposed legislation

12—13 *Imprimitur* to *Imprimatur*

16—17 սլամին թեատր

20 *qiflimis his*

I. *quasius* (ky)

A. Definitions

—*Si am prym am ykemant. Blywysf ym*

6-7 mm. *mijus*

10 *ηηωρά*

15 յարմարութեամբն (եած)

17 *qbusmfp*

18. Ի ԲԻԼԱՆԴԻՈՒ (degkn)

18-19 June

የኢትዮጵያ ባንክ

unoh ŋ h γ unoh̄ku

Ինչպես կարելի է տեսնել, Մովսես Խորենացու Պատմության վերը բերված պատառիկում կան Հատվածներ առաջին գրքի Գև Դ գլուխներից և Դանիելյան նշանագրերի, պատմությունից ինչպես նաև Սահակ Պարթեի կողմից Անատոլիոս զորավարին, Թեոդոս կայսրի կողմից Անատոլիոս զորավարին, և Թեոդոս կայսրի կողմից Սահակ Պարթեին գրված նամակներից, նաև մի Հատված Ողբից:

Մենք այստեղ տեղի սղության պատաճոռվ կանդ ենք առնում միայն պատառիկի առանձնապիս հետաքրքրություն ներկայացնող այն հատվածի վրա, որը վերաբերում է Դանիելյան նշանագրերին:

Դեռ շատ վաղուց է, որ Դանիելյան նշանադրերի գործածման ժամանակի հարցը հուզել է մեր մի շաբթ պիտնականներին:

Ինչպիս Հայտնի է, Մեսրոպ Մաշտոցի կենսագիր և նրա ավագ աշակերտ Կորյունը իր «Վարք Մաշտոցի» գրքում ասում է այն մասին, որ Վոամշապուհի Կորյունը հիմնական մասնակի մասին Դանիելյան նշանագրերը բերվեցին Հայագավորության հինգերորդ տարին՝ Դանիելյան նշանագրերը բերվեցին Հայաստան. «Ե Հինգերորդ ամի թագաւորութեան նորա (Վոամշապուհ) ի նա Հայաստան. Ապա Կորյունը հաղորդում է, որ այդ գրերով Մեսրոպը երկու տարի դասավանդել է.

«Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային ապա հրասան տույր առաջ նայն ուրեք նովին կրթել. որով և յաստիճան իսկ վարդապետութիւն գեղեցիկ՝ երանելին հասանէր, և իրեւ անս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր և նովին նշանագրովք տանէր»²:

Ապա Կորյունը շարունակության մեջ ասում է այն մասին, որ երբ տեսան,
թե հնարավոր չէ այդ նշանագրերով հայերեն լեզվի «զսիւղորաց»՝ կապերն
ամբողջությամբ արտահայտել, դարձյալ հոգսի մեջ ընկան, մինչև, որ
Մեսրոպ Մաշտոցը Վոամշապուհ հայոց թագավորի հրամանով և Սահակ Պար-
թի կաթողիկոսի համաձայնությամբ ճանապարհ ընկավ նոր սրբնումների.
դարձյալ Վոամշապուհի հինգերորդ տարում:

«Բակ իրրե ի վերայ հասեալ, թէ չեն բաւական նշանադիրքն ողջ ածել զիւղորայս զկապս հայերէն լիզոյն, մանաւանդ զի և նշանադիրքն իսկ յայլոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան, յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգոս դառնային, և նմին ելո խնդրէին ժամանակս ինչ:

Վասն որոյ առեալ երանելոյն Մաշտոցի դաս մի մանկառ հրամանաւ արքայի և միաբանութեամբ սրբոյն Սահակայ, և հրաժարեալք ի միմեանց համբուրի սրբութեանն՝ խաղայր, գնայր ի նինզերորդ ամի Վռամշապիոյ արքային Հայոց, և երթեալ հասանէր ի կողմանս Արամի՝ ի քաղաքս երկուս Ասորոց՝ որոց առաջինն Եղեսիա կոչի, և երկրորդին Ամիդ անուն»³:

Առյունի վերոհիշյալ պարբերություններից երկում է, որ բնագրում լուրջ հակասություն կտ. Սրբեր չեր կարող, որ Վոամշապուհի Հինգերորդ տարում Դանիելյան նշանագրերը բերվեին և հետո երկու տարի նրանցով ուսուցվեին և ապա անհաջողության մատնվելով դարձյալ Վոամշապուհի Հինգերորդ տարում Մեսրոպը նոր որոնումների զնար: Անկասկած ինչպիս պարզ երկում է, կամ երկու հնգերից մեկն է սիսակ և կամ փորձարկման երկու տարին պետք է լինի ամենի կարճ մի ժամանակ, հավանաբար երկու ամիս:

Կորյունի հետմահքը մեր մատենագիրների մոտ ևս ուսուցման ժամանակա-
շրջանի հարցը հակասական ձևով է դրված: Պատմահայր Մովսես Խորենացին
ըստ դիտական հրատարակության, այդ փորձարկման տարիները կոչում են
«պամս սակաւու»⁴:

Դադար Փարպեցու մոտ ինչպես հաստատել է Գ. Տեր-Մկրտչյանը, Դանիելյան նշանագրի վերաբերյալ հատվածի մեջ մասը ընդմիջարկություն է

Հ Ե Ա Բ Հ Ա Ն, Վարք Մաշտոցի, բնագիրը ձեռազրտեան այլ ընթերցվածներով, Յարգ-
մանությամբ, սոսաջարանով և ծանոթություններով ի ձեռն պրոֆ.-դ-ր Մանուկ Սքեղ-
յանի, Երևան, 1941, էջ 44:

² *Im übrigen*:

³ *Latin-English*, £9.40.

«Մովսեսի Առքենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Արկղեան Ա. Յառաւթիւնեան. Տփոփո, 1913, էջ 326:

Հանդիսանում Մ. Խորենացուց¹: Փարզեցու մնացյալ մասերում էլ հիշատակված շեն այդ երկու հինգ տարիները և ոչ էլ Դանիելյան նշանագրերով ուսուցանելու ժամանակի տևողությունը:

Ստեփաննոս Տարոնեցի Ասողիկը, Դանիելյան նշանագրերի Հայաստան հասնելը դարձյալ Վոամշապուհի հինգերորդ տարում է հիշատակում, իսկ նրա վեցերորդ տարումն էլ հայ գրերի վերջնական դյուսն է համարում²:

Վարդան պատմիչը իս գրում է, որ Վոամշապուհի հինգերորդ տարում է հորինում Մեսրոպ Մաշտոցը նշանագրերը³:

Սամվել Անեցին իր ժամանակագրության մեջ անդրադառնում է Դանիելյան նշանագրերի ուսուցման տևողության հարցին և ի տարբերություն Կորյունի, ասում է, որ միայն մեկ տարի է ուսուցվել այդ տառերով.

«Եի՛, Պարսից Արտաշիր՝ ամս Գ: Սկիզբն դպրութեանս Հայոց, Մաշտոց՝ որ է Մեսրոպ երանելի՝ և մեծն Խաչակի դԴանիելի նշանագիրսն յօրինէին ընկերօք հանդերձ: Եւ յետ միոյ ամի դարձեալ աստուածատուր նշանագոք զնոյն յեղանակեալ, որով և դպրութիւնք և դիրք աստուածայինք ուղղեալ թարգմանէին»⁴:

Կիրակոս Գանձակեցին գրում է, որ թեև շատ ուրախ եղան ստանալով դանիելյան նշանագրերը և սկսան հայերեն թարգմանել Աստվածաշունչը, բայց տեսան, որ հնարավոր չէ «զամենայն սիլորայսն ողջ ածել, և զշաղկապս և դրաս, սկսան դարձեալ ի հոգս մտանել վասն այնորիկ...»⁵ Այստեղ արգեն բնավ խոսք չկա ուսուցման տևողության մասին:

Դանիելյան նշանագրերի ուսուցման տևողության հարցը, շուրջ հարյուր ութսուն տարի է ինչ, էլ ավելի հակասական ու խճճված վիճակում է դտնվում մեր հայտնի պատմաբանների ու բանասերների երկերում: Դեռևս Միքայել Չամշյանից սկսած ու նրանից հետո, մեր գիտնականները այս հարցում երկու խմբի են բաժանվել, մի մասը հակված է ուղղել Վոամշապուհի թաղավորության հինգերորդ տարիներից մեկը և անգամ վեցերորդ տարին. իսկ երկրորդ խոմբը ճիշտ համարելով այդ հնդերը, կողմնակից է «ամս երկուան դարձնել ամիսս երկու և կամ բոլորովին ընդմիշարկություն համարելով մեկդի վանել այդ պարբերությունը»:

Այսպես, դեռ Միքայել Չամշյանը գրում էր, որ Կորյունի մոտի այդ հակասությունը արդյունք է գրիշների թույլ տված սխալին. նա ենթադրում էր թե երկրորդ հինգերորդը պետք է լիներ յոթերորդ, իսկ Մեսրոպի վերադարձը անհրաժեշտ էր դնել ոչ թե վեցերորդ, այլ Վոամշապուհի ութերորդ տարում, թեև Չամշյանը այս էլ ճիշտ շհամարելով առաջարկում է ուղղել այն: Նա

¹ «Ղազարայ Փարուցւոյ Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան», աշխատութեամբ Գ. Տէր-Միքայելան և Ստ. Մալխասեան, Տփդիս, 1904, էջ 15 (ծանոթ. 3):

² «Տիեզերական Պատմութիւն Ստեփաննոս վարդապետի Տարօնեցւոյ», Փարիզ, 1859, էջ 74—75:

³ «Հաւաքումն պատմութեան վարդանայ վարդապետի լուսաբանեալ», Վենետիկ, 1862, էջ 49:

⁴ «Մամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքումնը ի զրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայութ, հրատ. Արշակ Տէր-Միքայելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 68:

⁵ «Պատմութիւն Հայոց արարեալ երբակոսի վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս, 1909, Ղուկասյան Մատենադարան, էջ 29:

գտնում էր, որ Կորյունի հիշատակած հինգերորդը իրը ոչ թե Դանիելյան նշանագրերի Հայաստան բերվելուն էր վերաբերվում, այլ Մեսրոպ Մաշտոցի Հայաստան գալուն և քարոզություն սկսելուն, ապա Զամշյանը նշում է, որ երկրորդ հինգերորդը պետք է լիներ տասնեհինգերորդ, իսկ վեցերորդն էլ տասնեւթեցերորդ¹:

Մաղաքիա արք. Օրմանյանը ևս խոսում է Կորյունի մոտ գտնվող այս հակասական տեղեկության մասին, սակայն ոչինչ չի առաջարկում և ասում է, որ «թվականներու հարմարությանց համար ավելի երկարելը ձանձրակի կրնողառնալ»²:

Բանասեր Գալուստ Տեր-Մկրտչյանը առաջին հինգերորդը համարում է ուղիղ, երկրորդը, շկողմնորոշվելով, գրում է «Հի... երրորդ», իսկ վեցերորդը դարձնում է ԺԶ (16)³:

Ակադեմիկոս Հ. Աճառյանը մի նոր ուղղում էր առաջարկում, գրելով հետեւյալը. «Անփոփոխ պահում եմ Կորյունի վեցերորդը, երկու ամսու և երկրորդ հինգերորդը, իսկ առաջին հինգերորդը ուղղում եմ երրորդ: Միայն առաջացել է հետեւյալ ձեռվ: Կորյունի ձեռագրում գրված է եղել երդ (համառոտագրված և առաջին տարի վրա պատվի նշանով), որ բնականարար պիտի կարդացվեր «երրորդ»: Մի խեղճ գրիչ, վրան պատիվ գրած ե-ը թվանշան համարելով՝ կարդացել է հինգերորդ: Մնացյալը պահել է ճիշտ նախկին ձեռվ, առանց անդրադառնալու թե 5+2 չի տալ 5»⁴:

Ավելի ուշ, մի այլ տեղում, դարձյալ ակադ. Աճառյանը վերստին անդրադառնալով այս հարցին գտնում է, որ փորձի երկու տարիները Մաշտոցի համար խիստ անհրաժեշտ էին. և մեծ պատիվ են բերում իրեն քանի որ պարսիկները, թուրքերը են. միայն հազարամյա գործածությունից հետո նորերս միայն գդացին իրենց այրութենի պակասավորությունը և դարմանելու կարիքը...⁵:

Բանասեր Գառնիկ Ֆնտպլյանը նկատում է Կորյունի մոտ սպրդած սխալը և առաջարկում է ուղղել երկրորդ հինգերորդը, քան թե առաջինը, «...զի Դանիելյան նշանագիրներուն հանկարծագյուտ հասնիլը ավելի տպավորիշ ըլլալով՝ ժամանակը ավելի ճշտիվ պահպան ըլլալու է»⁶: Թեև վեցերորդ բառը անփոփոխ պահպանում է:

Ակադեմիկոս Հ. Մանադյանը, ինչպես նաև պրոֆ. Ն. Աղոնցն ու Ն. Ակինյանը ընդունում են, որ Կորյունի բնագիրը հարազատորեն մեզ չի հասել, այլ ժամանակի ընթացքում բազմաթիվ ընդմիջարկություններ է ունեցել: Ակադ. Մանադյանը նկատի ունենալով «ամս երկու-ն «ամիսս երկու» ուղղողներին և ակադ. Աճառյանի մտցրած ուղղումը, գրում է հետեւյալը.

¹ Միքայել վ. Զամշյան, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, Հատ. Ա, 1784, էջ 763—764 (ծանօթութիւն Բ դրոց):

² Մաղաքիա արք. Օրմանյան, Ազգակատաւմ Ա, էջ 277, կ. Պոլիս, 1912:

³ Գալուստ Տեր-Մկրտչյան, Հայ գրերի 1500-ամյակի առթիվ պատասխան լեռի բաց նամակին, «Արարատ», 1912, 5—6, էջ 508—511:

⁴ Հ. Աճառյան, երկու ուղղում Կորյունի մեջ, «Տեղեկագիր» Գիտ. ակադ. Հայկական ֆիլ., 1941, հ. 1(6), էջ 169:

⁵ Հ. Աճառյան, Մեսրոպ Մաշտոց, «Եղմիածին», 2, 1955, էջ 14:

⁶ Կորիւն, Վարք Մաշտոցի, ուղղեալ և լուսարանեալ ի Գառնիկ Ֆնտպլյանէ, Երաւաղէմ, 1930, էջ 18:

«Ըստ իս բոլոր այս ուղղումներն էլ հնարավոր են և միանդամայն հավանական կարելի է համարել, որ վերոհիշյալ երկու «հինգերորդ»-ներից անփոփոխ պետք է պահել երկրորդը»¹:

Իսահակ Հարությունյանցը իր «Հայոց պիրը» աշխատության մեջ բոլորովին նոր ուղղում է առաջարկել մտցնել: Նու անփոփոխ թողնելով երկու հինգերը առաջարկում է «ամս երկու»-ն դարձնել «ամիս երկու»: Իս. Հարությունյանցը այս մասին դրում է:

«Սակայն ցայծմ ամենքն էլ վերջին «ի հինգերորդ» ամիս ուղղել են «ի տասն իւ հինգերորդ» առարկելով որ բառի առաջին մասը թողված է արտադրողների շնորհիվ: Այս բացատրությունը գուցե անհավանական չիներ, եթե Կորյունի հաջորդ էջի վերա՝ Մեսրոպի ձեռքով տառի գյուտի ժամանակը նշանակված չիներ «ի վեցերորդ» ամիս վոամշալհոյ: Պատահական սխալ շնորհ կարող ընդունել նույնպես «ի վեցերորդը»: Մեզ ավելի հավանական է թվով արտագրողների արած մի այլ սխալ, որ եթե ուղղվի, այդ տարիները ճիշտ դուրս կդան: Փոխանակ կարդալու «Եւ իբրև ամս երկու պետք է կարդալ «իբրև ամիս երկու»:

Անհրաժեշտ ենք գտնում մեր կողմից այստեղ ավելացնելու, որ հեշտ էր ամն ու ամիսը շփոթվել դրիշների կողմից, քանի որ մի այլ տարեթիվ կապակցությամբ դարձյալ տարակարծություն կա Կորյունի մոտ: Կորյունը գրում է, «յետ ամաց երից անցելոց յաջողեցաւ վահանայ Ամատունոյ քրիստոսասէր փութով խորան ոքանչելի կանգնել տաշած վիմօք»: Այսպես է գրված Կորյունի բոլոր ձեռագրերում, բայց մեկից՝ Փարիզի աղդ. Մատենադարանի № 178 ձեռագրից, որը ԺԲ—ԺԴ դդ. գրչություն ունի և որտեղ փոխանակ «յետ ամաց երից»-ի դրված է «յետ ամսոց երից»: Ակինյանը Կորյունի իր հրատարակած բնագրում այս վերջի վկայությունն է ընդունել, քանի որ ինքը, ինչպես ճիշտ կերպով նկատում է, մի խորան կառուցելու համար կարիք շկար երեք տարի աշխատելու, այլ երեք ամիսը բավական էր²:

Գերմանացի հայագետ Մարկվարտը, նկատելով Կորյունի մեջ մուտք գտած սխալը, «Եւ իբրև ամս երկու կարդեալ զվարդապետութիւն իւր» բառերը համարում է ուշ շրջանի լուսանցագրություն և ջնջում է, որահալանելով երկու հինգերորդները, համարելով, որ փորձի համար շատ կարծ ժամանակ է պետք եղել³:

Ակադեմիկոս Մանուկ Արեգյանը իր «Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու դրականության սկիզբը» հոդվածում դրում է, որ «Մաշտոցը դառնում է վարդապետ, այսինքն ուսուցիչ, և մոտ երկու տարի (կամ երկու ամիս) մանուկներին սովորեցնում է դրանցով»:

Դարձյալ ակադ. Մ. Արեգյանը իր հրատարակած Կորյունի վարք Մաշտո-

¹ Հակոբ Մանուկյան, Քննական տեսություն հայ ժողովրդի սրամության, հայության մասն Ա., Արշակունիների հաստատութիւնը Հայուստանում մինչեւ Մարզպանության շրջանը (1—5-րդ դդ.), Երևան, 1957, էջ 253:

² Իսահակ Հարությունյանը, Հայոց պիրը, Թիֆլիս, 1892, էջ 170, ակնտողառակի ծանոթությունը (10):

³ Ն. Ակինյան, Պատմութիւն վարուց..., էջ 197 և 180:

⁴ Պրոֆ.-դոկտ. Հ. Մարկվարտ, Պատմություն հայերեն նշանագրերու և վարուց Ա. Մաշտոցի, զերմաներեն թարգմանեց Հ. Ա. Վարդանյան, Վիեննա, 1913, էջ 26—27:

⁵ «Սովետական զրականություն», Երևան, 1941, № 1, էջ 49:

ցի բնագրում, վերևում թողնելով «ամս երկու» բառերը, տողատակի ծանոթության մեջ գրել է «թերեւ ուղղելի ամիսս երկու»¹:

Այս մեջըերումներից երեսում է, որ ակադ. Արեգյանը հատուկ կողմնորոշում չի ունեցել այս հարցում, բայց համարական է համարել նաև դեռևս իս. Հարությունյանցից առաջարկված ուղղումը:

Ն. Ակինյանը ևս այն կարծիքին է, որ Դանիելյան նշանագրերի ուսուցման համար կարիք չկար «անոնց անբավական ըլլալուն համար 2 տարի փորձի նեթարկելու». Ակինյանը «Հանդէս ամսօրեալ»-ում հրատարակած Կորյունի բնագրում պահպանում է հիշատակված երկու հինգ տարիները, սակայն երկու տարի ուսուցանելու պարբերությունը դուրս է թողնում²:

Մեր բոլոր մեջըերումներից պարզ երեսում է, որ հայագետներից առաջին խումբը, որը ձգտելով պահպանել Դանիելյան նշանագրերով ուսուցանելու երկու տարիները, գրշագրական սխալ է համարել երկու անգամ հիշատակված հինգ տարիներից առաջինը և կամ երկրորդը և երրեմն էլ նույնիսկ վեցերորդ տարին և առաջարկել են զանազան ուղղումներ (Զամշյան, Աճառյան, Ֆնտգրլյան, Գ. Տեր-Մկրտչյան ևն), հայագետների մյուս խմբի ներկայացուցիչները կամ գրշագրական սխալ են համարել «ամս երկու»-ն և դարձրել են այն «ամիսս երկու» (իս. Հարությունյանց), իսկ ոմանք էլ այն ընդմիջարկություն համարելով իսպառ դուրս են վանել Կորյունի բնագրից (Մարկվարտ, Ակինյան), ոմանք էլ դժվարացել են կողմնորոշվել և մնացել են երկու կարծիքի (Արեգյան, մասամբ նաև Մանանդյան):

Այս հարցի լուծմանը մեծ շափով նպաստում է մեր հրատարակած Խորենացու Պատմության նորահայտ երկաթագիր պատառիկը:

Ինչպես հայտնի է, Մովսես Խորենացու գիտական հրատարակության մեջ էլ է պահպանվել Դանիելյան նշանագրերի մասին Կորյունին մոտ կանգնած նման մի պարբերություն: Դանիելյան նշանագրերը Սահակ Պարթևին և Մեսրոպ Մաշտոցին հանձնվելու մասին, պատմահոր գիտական հրատարակության մեջ մենք կարդում ենք. «Որոց ուսեալ, և թևածելով ընդ նոսա տղայոց զամս սակաւս, տեղեկացեալ գիտացին՝ ոչ լինել բաւական այնու նշանագրօք...»³:

Խորենացու Պատմության մեր հրատարակած երկաթագիր պատառիկը (№ 1411, էջ 1ր, 2-րդ սյունակ) այս հարցում բոլորովին տարբերվում է Մովսես Խորենացու Պատմության գիտական հրատարակությունից: Պատառիկում պարզ կարդացվում են հետեւյալ տողերը. «Որոց առեալ եւ թևածելով ընդ նոսա եւ տղայս զոմանս սակաւս, տեղեկացեալ գիտացին՝ ոչ լինել (այստեղ պատառիկը կանգ է առնում, քանի որ շարունակությունը կտրված է, հաշորդ բառերը մենք լրացնում ենք դիտ. հրատարակությունից—Ս. Ք.) բաւական այնու նշանագրօք...»:

Խորենացու գիտական հրատարակության մեջ, որտեղ օգտագործվել են մի քանի տասնյակ ձեռագրեր և տպագրություններ, ոչ մի տարբնթերցվածքում շենք գտնում նման մի պարբերություն: Այս արժեքավոր պատառիկը մայր

¹ Կ ո ր յ ո ւ ն, Վարք Մաշտոցի... Երեան, 1941, էջ 44:

² Ն. Ակինյան, Պատմութիւն վարուց Ս. Մաշտոց վարդապետի՝ քննութիւն և բնագիր. «Հանդէս ամսօրեալ», Վիեննա, 1949, 4—12, էջ 203 և 225—226:

³ «Մովսեսի Խորենացու Պատմութիւն Հայոց», աշխատութեամբ Մ. Արեգյան և Ս. Յարութիւնեան, Տփիփո, 1913, էջ 326:

ձեռագրից ընկնելուց հետո, ինչպես վերևում տեսանք, դործ է ածվել որպես մի ձեռագրի պահպանակ, նրա ներքինի մասից մեկ տող կտրված է (կազմարարը այն կտրել է իր կազմած ձեռագրի մեծությամբ):

Խորենացու Պատմության սույն Հնագարյան պատառիկի, (որը 300—400 տարով ավելի հին է, քան գիտական հրատարակությունում օգտագործված Խորենացու Հնագույն ձեռագրերը) տված «աղայս զոմանս սակաւ», ուշագրավ ընթերցվածքի հիման վրա, պետք է հետեւ մեր, որ Կորյունի մոտ մուտք գտած «ամս երկու» արտահայտությունը հետագա դարերի աղավաղման արդյունք է, և նրա հիման վրա է, որ ուշ շրջանի գրիշների կողմից փոփոխման են ենթարկվել նաև Խորենացու ձեռագրերը «զամս սակաւ» ձևով: Հնագույն մեր պատառիկը արտագրված լինելով իրենից ավելի հին մի այլ երկաթագիր ձեռագրից, պահպանել է փոխանակ «զամս սակաւ»-ի, «աղայս զոմանս սակաւ» ձևը: Պատմառիկի այս նորահայտ ընթերցվածքը ոչ միայն ուղղում է մտցնում Խորենացու մեր գիտական համահավաք բնագրում, այլև մեզ հետեւ մեր է տալիս այն, որ Խորենացու Հնագույն ձեռագրերի զրման ժամանակ, երբ գոյություն են ունեցել նաև Կորյունի հարազատ ձեռագրերը, այդ օրինակներում խոսք չի եղել Դանիելյան նշանագրերով «ամս երկու» գասավանդելու մասին, այլ այդ ժամանակաշրջանը շատ կարճ միջոց է ընդգրկած եղել (երկու ամիս): Դարձյալ այդ է եղել պատճառը, որ Խորենացին բնավ իսկ կանգ չի առել Դանիելյան նշանագրերի ուսուցման տեսողության վրա: Միայն ավելի ուշ է, որ աղավաղված Կորյունի բնագրի հետեւանքով, Մովսես Խորենացու Պատմության հետագա ընդօրինակողները, «աղայս զոմանս սակաւ» պարբերությունը, որը վերաբերում է Մեսրոպ Մաշտոցի կողմից մի քանի տղաների այդ գրերով ուսուցանելուն, փոխել են, մի կերպ հարմարեցնելով աղավաղված Կորյունի մեջ մուտք գտած «ամս երկու» ձեին, Դանիելյան նշանագրերի ուսուցման վերաբերող Խորենացու բնագրում ավելացնելով «զամս սակաւ» պարբերությունը: Այդ պարբերության սրբագրման դործին, ինչպես տեսանք, մեծապես նպաստում է վերոհիշյալ Հնագույն պատառիկը: Նրա օժանդակությամբ պետք է ուղղել նաև Կորյունի՝ մեծ բանավեճերի տեղիք տված Դանիելյան նշանագրերի օգտագործման ժամանակին վերաբերող հատվածը: